Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի մարտի 9-ի №107-Ա որոշմամբ

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի դեկտեմբերի 20-ի №537Ա որոշմամբ

«Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար 14515-14683ՄՀց/14935-15103ՄՀց, 22015-22190ՄՀց/23023-23198ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության

Պայմանները

(Թույլտվություն №1021, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի №537Ա որոշմամբ)

1. Սահմանումներ

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողով.

2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն.

3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություններ օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.

4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2012 թվականի դեկտեմբերի 20-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2028 թվականի մարտի 3-ը:

3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Երևան քաղաքում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում ռադիոռելեային կապի գծերի շահագործմամբ օգտագործել 14515-14683ՄՀց/14935-15103ՄՀց, 22015-22190ՄՀց/23023-23198ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝
   1) ռադիոռելեային կապի գծերի անվանումը, ռադիոռելեային կայանների տեղադրման վայրերը, աշխարհագրական կոորդինատները, բարձրությունը ծովի մակերևույթից՝

հ/հ	Ռադիո-ռելեային կապի գծի հատվածի անվանումը	Ռադիոռելեային կապի գծի կայանների տեղադրման վայրերը		Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
		կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7	8
1	VB1-NB1	Արագածոտնի մարզ, գ. Վերին Բազմաբերդ	Արագածոտնի մարզ, գ. Ներքին Բազմաբերդ			1919	1333
2	ARSH1-EG1	Արմավիրի մարզ, գ. Արտաշեն	Արմավիրի մարզ, ք. Վաղարշա-պատ			852	876
3	EG4-EG1	Արմավիրի մարզ, գ. Սամագար	Արմավիրի մարզ, ք. Վաղարշա-պատ			885	876
4	NRN1 - LUS1	Կոտայքի մարզ, գ. Նուռնուս	Կոտայքի մարզ, ք. Չարենցավան			1498	1649
5	JR1-EG1	Արմավիրի մարզ, գ. Ջրարատ	Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ			838	876
6	LA1-ZRJ1	Շիրակի մարզ, գ. Լանջիկ	Արագածոտնի մարզ, գ. Զարնջա			1985	1719
7	TA1-TA3	Արագածոտնի մարզ, ք. Թալին	Արագածոտնի մարզ, ք. Թալին			1833	1608
8	YE21-AB5	Կոտայքի մարզ, գ. Պտղնի	Կոտայքի մարզ, Աբովյան			1453	1408
9	HR1-HR4	Կոտայքի մարզ, ք. Հրազդան	Կոտայքի մարզ, ք. Հրազդան			1921	1707
10	TS4-HR3	Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր սպորտ բազա	Կոտայքի մարզ, ք. Հրազդան			1979	1738
11	MSN1-GUe	Շիրակի մարզ, գ. Մյասնիկյան	Շիրակի մարզ, ք.Գյումրի			1676	1526
12	AZW1-TN1	Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ	Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար			2039	1999
13	SRH1-GA1	Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան	Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ			2059	2044
14	LCHK1-LVZ1	Սյունիքի մարզ, գ. Լիճկ	Սյունիքի մարզ, գ. Գուդեմիս			1742	1356
15	SKR1-KHSH1	Տավուշի մարզ, գ. Սևքար	Տավուշի մարզ, գ. Խաշտարակ			1057	983
16	YE111-YE36	ք. Երևան, փ.Քոչարի	ք.Երևան, փ.Թումանյան			1112	1032

2) ռադիոռելեային կապի գծերի օգտագործման նպատակը՝ բջջային հեռախոսակապի կազմակերպում.

3) ռադիոռելեային կայանների տեսակը՝ թվային.

4) հատկացված ռադիոհաճախականությունները (հաղորդման)՝

հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Հատկացված ռադիոհաճախականությունները (ՄՀց)	
1	2	3	4

1	VB1-NB1	15075	14655
2	ARSH1-EG1	14655	15075
3	EG4-EG1	14515	14935
4	NRN1 - LUS1	23051	22043
5	JR1-EG1	14515	14935
6	LA1-ZRJ1	15075	14655
7	TA1-TA3	23023	22015
8	YE21-AB5	22078	23086
9	HR1-HR4	23198	22190
10	TS4-HR3	14627	15047
11	MSN1-GUe	14991	14571
12	AZW1-TN1	14599	15019
13	SRH1-GA1	14655	15075
14	LCHK1-LVZ1	14599	15019
15	SKR1-KHSH1	14935	14515
16	YE111-YE36	22043	23051

5) Հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը՝

հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Հաղորդչի հզորությունը (Վտ)		Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (ՄԲիթ/վ)
		կայան 1	կայան 2		
1	2	3	4	5	6
1	VB1-NB1			16M0G7W	16
2	ARSH1-EG1			16M0G7W	16
3	EG4-EG1			16M0G7W	16
4	NRN1 - LUS1			16M0G7W	16
5	JR1-EG1			16M0G7W	16
6	LA1-ZRJ1			16M0G7W	16
7	TA1-TA3			16M0G7W	16
8	YE21-AB5			16M0G7W	64
9	HR1-HR4			16M0G7W	64
10	TS4-HR3			16M0G7W	16
11	MSN1-GUe			16M0G7W	16
12	AZW1-TN1			16M0G7W	16
13	SRH1-GA1			16M0G7W	16
14	LCHK1-LVZ1			16M0G7W	16
15	SKR1-KHSH1			16M0G7W	32
16	YE111-YE36			16M0G7W	16

6) անտենաների տեսակը, բարձրությունը երկրի մակերևույթից, տրամագիծը, ուժեղացման գործակիցը՝

հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Անտենայի տեսակը		Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)		Անտենայի տրամագիծը (մ)		Ուժեղացման գործակիցը (դԲ)	
		կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	VB1-NB1	VHP2-142	VHP2-142	12	10	0,6	0,6	37,4	37,4
2	ARSH1-EG1	VHP2-142	VHP2-142	18	25	0,6	0,6	37,4	37,4

3	EG4-EG1	VHP2-142	VHP2-142	16	25	0,6	0,6	37,4	37,4
4	NRN1 - LUS1	VHP1-220	VHP1-220	6	6	0,3	0,3	34,9	34,9
5	JR1-EG1	VHP4-142	VHP2-142	18	25	1,2	0,6	42,7	37,4
6	LA1-ZRJ1	VHP2-142	VHP2-142	28	8	0,6	0,6	37,4	37,4
7	TA1-TA3	VHP2-220	VHP2-220	34	15	0,6	0,6	40,1	40,1
8	YE21-AB5	VHP2-220	VHP2-220	5	27	0,6	0,6	40,1	40,1
9	HR1-HR4	VHP1-220	VHP1-220	14	30	0,3	0,3	34,9	34,9
10	TS4-HR3	VHP2-142	VHP2-142	20	30	0,6	0,6	37,4	37,4
11	MSN1-GUe	VHP2-142	VHP2-142	25	22	0,6	0,6	37,4	37,4
12	AZW1-TN1	VHP2-142	VHP2-142	10	10	0,6	0,6	37,4	37,4
13	SRH1-GA1	VHP2-142	VHP2-142	10	30	0,6	0,6	37,4	37,4
14	LCHK1-LVZ1	VHP4-142	VHP2-142	6	6	1,2	0,6	42,7	37,4
15	SKR1-KHSH1	VHP4-142	VHP4-142	25	12	1,2	1,2	42,7	42,7
16	YE111-YE36	VHP1-220	VHP1-220	8	45	0,3	0,3	34,9	34,9

5. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոհաճախականություններն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:
6. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
7. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
8. Թույլտվության գործողությունը չի տարածվում Կարգավորվող անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Կարգավորվող անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
9. Կարգավորվող անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն համապատասխան ապահովել իրեն կողմից շահագործվող Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հուսալիությունն ու անվտանգությունը:
10. Կարգավորվող գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:

11. Կարգավորվող անձը պարտավոր է վարել լիցենզավորված գործունեության առանձացված հաշվապահական հաշվառում:
12. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված անլար հասանելիության լայնաշերտ ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից: Տեխնիկական նախագիծը պետք է համապատասխանի Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» №30Ն որոշմանը:
13. Թույլտվության պայմանների 12-րդ կետով նախատեսված տեխնիկական նախագծի ներկայացումից հետո Թույլտվության պայմանները կարող են փոփոխվել:
14. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված անլար հասանելիության լայնաշերտ ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:
15. Կարգավորվող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում կամ այլ կերպ փոխանցում կամ զիջում կամ գրավադրում կամ այդ անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի փոփոխություն կարող է իրականացվել միայն Հանձնաժողովի համաձայնությունը Կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո:
16. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների հատվածների արդյունավետ օգտագործումը:

17. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող գործունեությանն առնչվող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
18. Կարգավորվող անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
19. Կարգավորվող անձը պարտավոր է ազգային անվտանգության մարմինների պահանջով իր ապարատային միջոցների կազմում ընդգրկել լրացուցիչ սարքավորումներ և ծրագրային միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու համար:
20. Կարգավորվող անձը պարտավոր է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովել իրավապահ և ազգային անվտանգության աշխատակիցների մուտքը հաղորդակցության սարքավորումներին, ենթակառուցվածքներին, միացնող-անջատող, ուղղորդող և նմանատիպ այլ սարքերին, ներառյալ՝ գաղտնալսումների իրականացման համար անհրաժեշտ սարքերին:
21. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
22. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
23. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և

հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:

24. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:
25. Կարգավորվող անձն իր գործունեության իրականացման ընթացքում պետք է ղեկավարվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներով, հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:

5. Գործունեության վերահսկում

26. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
27. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կամ նրա լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթաց-քում Կարգավորվող անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:
28. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

6. Պատժամիջոցներ

29. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ

խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

1) տույժերի և տուգանքների կիրառում,

2) Թույլտվության փոփոխում,

3) Թույլտվության կասեցում,

4) Թույլտվության գործողության դադարեցում:

30. Կարգավորվող անձը Թույլտվության 29-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

8. Ծանուցում

31. Սույն Թույլտվության պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:»: